

**«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն»
արտահայտությունների սահմանումը**

Բնական միջավայրի արտակարգ բարձր աղտոտվածություն համարվում է.

Մթնոլորտային օդի համար

Սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՄԹԿ) գերազանցումը.

- 20-29 անգամ. երբ այդ մակարդակը պահպանվում է 2 օրից ավելի
- 30-49 անգամ. երբ այդ մակարդակը պահպանվում է 8 ժամից ավելի
- 50 և ավելի անգամ:

Մակերևութային ջրերի համար

Սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի գերազանցումը 100 և ավելի անգամ (այն նյութերը, որոնց համար սահմանված է ջրում լրիվ բացակայություն. որպես սահմանային թույլատրելի կոնցենտրացիա ընդունվում է 0.01 մկգ/դմ³)

- լուծված թթվածնի պարունակության իջեցումը մինչև 2 մգ/դմ³ և ցածր
- թթվածնի հնգօրյա կենսաքիմիական պահանջի (ԹԿՊ₅) պարունակությունը 60 մգՕ₂/դմ³ և ավելի
- ջրի հոտի՝ մինչև 4 բալ և ավելի ուժեղացումը. որը բնորոշ չէ տվյալ տեղանքի համար
- 6 կմ² տարածությամբ տեսահորիզոնի 1/3-ից ավելի տարածքով որևէ թաղանթի (նավթային. յուղային և այլ ծագման) առկայությունը
- փափկամարմինների. ձկների. գորտերի և այլ ջրային օրգանիզմների և ջրային բույսերի համատարած ոչնչացումը:

Բնական միջավայրի բարձր աղտոտվածություն համարվում է.

Մթնոլորտային օդի համար

- որոշվող նյութի պարունակության ՄԹԿ-ից 10 և ավելի անգամ գերազանցումը

Մակերևութային ջրերի համար

- ՄԹԿ-ի գերազանցումը 10-ից մինչև 100 անգամ (նավթամթերքների. ֆենոլների և պղնձի իոնների համար՝ 30 -ից 100 անգամ)
- ԹԿՊ₅-ի կոնցենտրացիայի 15-ից մինչև 60 մգՕ₂/դմ³ պարունակությունը
- լուծված թթվածնի պարունակության իջեցումը 3-ից մինչև 2 մգ/դմ³
- մինչև 6 կմ² տարածությամբ տեսահորիզոնում ջրի մակերևույթի 1/4-ից մինչև 1/3 տարածությամբ թաղանթի առկայությունը (նավթային. յուղային և այլ ծագման)
- 6կմ²-ից ավելի տեսահորիզոնում ջրի մակերևույթի 1-ից մինչև 2կմ² տարածքով թաղանթի առկայությունը:

Մանթագրություն. օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ) հաստատվել են ՀՀ Կառավարության 2006թ. ապրիլի 2-ի N 160-Ն որոշմամբ: